

Առաջարկութիւն «ՀԱՅՈՒԹԻՐ» ամսագրի № 28

ՄԱՄԻՆ-ՄԻՔԻՐԵԱԿ

ԾԵՐ ՃՆՃՂՈՒԿԸ


ՃԻՃՈՒՆ,

ՊԱՌԱԻ ՄՈՌԱՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՔԸ

Թարգմանեց

ՕՐ. Ն. Ա. Գ. Ա. Զ. Ե. Ա. Զ.

Ա Հ Ա Յ



ԹԻՖԼԻՍ  
օր. Ն. Աղանեսնցի, պօլից. 7.  
1912

30 MAY 2011

Հրատարակութիւն «ՀԱ.ՍԿԵՐ» տմագրի № 28

ՏԻՄ

22

Ա/

ՄԱՄԻՆ-ՄԻՔԻՐԵԱԿ

# ԾԵՐ ՃՆՃՂՈՒԿԸ

ՃԻՃՈՒՆ,

ՊԱՌԱԻ ՄՐՈՎԱՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՔԸ

Թարգմանեց

ՕՐ. Ն. Ա.ԴԱՆԵՍՆՑ

Հ. Հ. Հ.

ԹԻՖԼԻՍ  
Ելեքտրասպ. օր. Ն. Աղանեանցի, պօլից. 7.  
1912

24.06.2012

2376-54

1891. 31/5/5 Wiesloch - Wuppertal  
522 Oly. Larkspur



9376-54

ԾԵՐ ԱՆՁՆՈՒԿ

—Քեռին ինչ որ շինում է, —ասաց աքաղազը,  
որ, դուքս ցցերավ իր փայլուն կուրծը:

—Ես զիտեմ ինչ է անում, —ուռենու վրայից ճըռատղեց ծեր ճնջուկը, թռչկոտելով իր՝ ասեղի նման բարակ սաների վրայ: —Փորձիր, տեսնենք կարժող ես իմանալ. հապահ: Բայց ինչ եմ ասում, աւելի լաւ է նեղութիւն չըկրես. Ճիշնոյն է խելքը բան չի կարի:

Աքաղաղը ձեւցրեց թէ չի լսում ճնճղուկի  
վիրաւորական խօսքերը և, յանդուզն մեծախօսին  
իր արհամարհանքը ցոյց տալու համար, թեերը  
թափահարեց, վիզը երկարացրեց ու կտուցը լայն  
բանայով, զիյ ձայնով կանչեց իր ծուղ-րու-դուն:

— Ե՞յ, յիմար ճշող, — ծաղրեց ծեր ճնճղուկը,  
ցնցւելով իր փոքրիկ մարմնով: — Երևում է որ  
բան չես հասկանում: Ծիւ-ծիւ:

Իսկ քաղաքի ծայրին գտնւող տնակի տէրը  
ճիշտ որ մի արտասովոր բանով էր զբաղւած։  
Ամենից առաջ քեռին սենեալից բերեց մի փոք-  
րիկ արկղիկ։ Յետոյ սրահից վերցրեց մի երկար  
ձող և մեխերով արկղիկը ամրացրեց վրէն։ Հինգ

տարեկան Սաքօն լարւած ուշադրութեամբ հետեւում էր նրա ամեն մի շարժւածքին:

—Ի՞նչ հրաշալի բան դառաւ, Սաքօ.—ասաց հայրը, վերջին մեխը խփելով:—Կատարեալ պալատ է...

—Բայց սարեակներն ուր են, ապի, հարցրեց երեխան:

—Սարեակներն էլ կը գան:

—Ա՛, սարեակի բուն է եղել... կը կուսց աքաղաղը, որ ականջ էր դնում խօսակցութեան:—Այդպէս էլ գիտէի:

—Ե՞ն յիմար, յիմար,—ծաղրեց ծեր ճընճուկը:—Այդ ինձ համար են պատրաստում... Այս: Հը, պառաւ, տես, ինչ տնակ են շինել մեզ համար:

Բայց նրա մարիկը նրանից խոհեմ էր և չէր հաւատում նրա խօսքերին, մանաւանդ որ քեռին էլ ասաց թէ սարեակների համար է շինում: Զընայելով դրան, չուզեց վէճի բռնւել ծերի հետ, քանի որ դրանից բան չէր դուրս գայ: Ո՞վ կարող էր վիճել ծերի հետ, նա միշտ իր ասածն էր կրկնում, իսկ կնիկը անբաւականութեան պատճառ դառնալ չէր ուզում: Ինչու կոիւ սկսել, երբ արել այսպէս պարզ լուսաւորում է, ամեն կողմը քընքը չուզում են դարնան առւակները և ծառերի բողբոջներն էլ լցւել ու կարմրել են: Շուտով կը բացւեն նրանք և

ամեն մէկը կը տայ մի մի կանաչ տերեւ, փափուկ, հստաւէտ, և փայլուն: Փառք Աստծու, ձմեռն անցել է և ամենքի համար եկել են երջանիկ օրերը: Ծեր ճընճուկը սասափիկ մըսկան է և շատ անգամ վիրաւորում է իր պառաւին, բայց գարնան այսպիսի ախորժ օրերին մոռացւում են նոյն իսկ ընտանեկան անախորժութիւնները:

—Ի՞նչ ես լուել, այ կնիկ—կպել էր նրան ծեր ճընճուկը: Բաւական է ինչքան կըտուրի տակ ավրեցինք, այնտեղ մուժն է, անյարմար և ամեն տեղից փշում է: Ուղիղն ասած, ես վաղուց արգէն մտադիր էի բռնս փոխեմ, բայց միշտ էլ ժամանակ չէի գտնում: Լաւ է որ քեռին ինքը գլխի ընկաւ... Տես, հաւերը հաւարուն ունեն, ձիերն ախոռ, շունը ործ միայն ես եմ այստեղ-այնտեղ թափառում: Քեռին խղճաց և ահա տնակ շինեց մեզ համար... Ինչ լաւ կապրենք, այ կնիկ:

Հայեաթի բոլոր բնակիչները զբաղւած էին քեռիով: Զին ախոռից էր գլուխը հանել, բրդոտ քուչին որջից գուրս էր եկել, մինչև իսկ մոխրաթաւալ կատու նազիկը, որ ամբողջ օրերով պառփած էր լինում արեկ տակ, նա էլ ուշադրութեամբ հետեւում էր, թէ վերջն ինչ է լինելու:

—Եյ, ծեր խաբեքայ—կանչեց ծեր ճընճ-

դուկը. նկատելով իր վաղեմի թշնամի նազիկին: — Ի՞նչ ես եկել, ծոյլ, Այժմ էլ չես կարող հասնել ինձ... բայց Խեղդոտիր քո մկներին ու հեռուից նայիր թէ ինչպէս կապրեմ իմ տնակում: Միշտ ես չըթոչկոտամ սառնամնիքնեւրին մի ոտի վրայ, իսկ դու տաք պառկեա վառարանի կողքին:

— Ի՞նչ կայ որ, կարելի է... համաձայնեց աքաղաղը, որ նոյնպէս չէր սիրում նազիկին: — Թէպէտ մեր ճընճղուկը մեծամիտ է և կըռւարար, բայց վառեկներ չի գողանում:

Քեռին աւարտելով գործը, վերցրեց արկղիկը և ամրացրեց ցանկապատի ամենապինդ գերանին, մի գեղեցիկ բուն էր, տախտակները լաւ կըսպած իրար, վերեփց երկաթէ կտուրով, իսկ կողքից կպած էր ուսենու չոր ճիւղը, որի վրայ լաւ կարելի էր հանգստանալ: Փոքրիկ կլոր պատուհանի մօտ, որից կարելի էր ներս մտնել բունը, կար և մի փայտէ ձողիկ—այն էլ վատ չէր հանգստանալու համար:

— Շտապիր, կնիկ, պատրաստ կաց. — ասց ծեր ճընճղուկը: — Եթէ ոչ կրգտնւին այնպիսի աներեսներ, որոնք կըյափշտակեն ուրիշ սեպհականութիւնը. . . Սարեակները ուր որ է կըդան:

— Իսկ եթէ դուքս անեն այնտեղից, — նկատեց մարդիկը — այս բունն էլ կը քանդենք, կամ

ուրիշը կը գայ և կը բռնի և այն ժամանակ մենք դուրսը կըմնանք: Քեռին էլ ասում էր թէ սարեակների համար է:

— Էհ, անխելք, կատակ էր անում:

Հէսց որ քեռին քաշւեց մէկ կողմը իր աշխատանքի արդիւնքը հեռուից գիտելու, ծեր ճընճղուկն արգէն երկաթէ կտուրին էր: Ուրախ ճընճղուկը, մի ակնթարթում նա անյայտացաւ պատուհանի մէջ, միայն պոչն երեաց:

— Էհէ, այստեղ շատ հիանալի է, — բարձրաձայն մտածում էր ճընճղուկը, խճւելով բրդէ քուրաների մէջ: — Ի՞նչպէս կըսպաքանայ պառաւս, փոքրիկներս էլ... Ոչ մի տեղից չի փչում, անձրէ էլ չի կաթում և, որ զիսաւորն է, ինքդ ես տանտէր: Վաս չէ: Զմեռն էլ չենք սառչի: Բարձրանալով բնի ամենավերին մասը, ծեր ճընճղուկը ուրախուրախ տարածեց իր փետուրները և կանչեց.

— Ես եմ, եղբայրներ: Շնորհ բերէք մեզ մօտ, մեր նոր բնակարանը:

— Աւագակը — յանդիմանեց նրան քեռին ներքեմից:

— Այդ նւր ես գնացել: Սպասիր, շուտով սարեակները կըդան. նրանք քեզ ցոյց կըտան:

Փոքրիկ Սաքօն սասափիկ վշտացած էր, որ նրա բնի մէջ ամենասովորական ճընճղուկն էր բուն դրել:

—Դու ամեն առաւծոտ նայիր. այս քանի  
օրս կըգան սարեակները, ասում էր հայրը:

—Հերիք են կատակները, քեռի. կանչում  
է ծեր ճընճղուկը վերեից.—խարել չես կարող...  
իսկ սարեակներին մենք պատասխան կըտանք:

## II

Ծեր ճնճղուկը տեղաւորւեց սարեակի բնի  
մէջ ինչպէս պատշաճ է ընտանեատէր թուչունին.  
Ին բնից փոխադրեց թէ աղւամազը և թէ այն  
ամենը, ինչ որ հսարաւոր էր:

—Իսկ այժմ թող աղգականներս բնակւեն  
այստեղ,—իրան յատուկ բարեսրտութեամբ վըճ-  
ռեց ծեր ճընճղուկը. —Ես միշտ պատրաստ եմ  
վերջին ունեցածս էլ բարեկամիս տալու... թող  
ապրեն և ինձ, ծերունուս, օրինեն:

—Տէսէք ի՞նչ առատաձենն է դառել,—  
ծաղրում էին միւս ճնճղուկները, իր աղգա-  
կաններին է տալիս:—Տեսնենք իրան որ դուքս  
անեն սարեակի բնից՝ ուր է գնալու:

Այս ամենը առւում էր ի հարկէ նախան-  
ձից և ծեր ճընճղուկը միայն ծիծաղում էր.  
Թող խօսեն: Մ՛հ, նա շատ փորձւած էր, շատ  
բան տեսած... Նստել է իր տաք բնի մէջ և  
ինքնագոնութեամբ յիշում է իր կեանքի ձախոր-  
դութիւնները: Մի անգամ քիչ էր մնում այրւէր,  
երբ մտել էր ծիսնելոյզը տաքանալու. մի ուրիշ

անգամ հաղիւ ազատւեց խեղդւելուց. յետոյ շա-  
րունակ սառչում էր. մի անգամ էլ գերի ընկաւ  
նազիկի թաւշտնման թաթերի մէջ և կիսակեն-  
դան դուքս պրծաւ: Է, շատ անյաջողութիւններ  
և փորձանքներ է անցել նրա զլխով... Ժամա-  
նակ է հանգստանալու, —մտածում էր նա—ես  
երկար աշխատած ճընճղուկ եմ... թող երիտա-  
սարդները փորձւեն, թէ ինչպէս պէտք է ապրել  
աշխարհիս երեսին:

Որքան էլ ծիծաղելի էր ծեր ճընճղուկի  
աներեսութիւնը, բայց կամաց կամաց հաշտ-  
ւեցին նրա հետ և նոյնիսկ ուզում էին հաւա-  
տալ, որ բունը իսկ և իսկ ծեր ճընճղուկի հա-  
մար էր շինած: Այժմ սպասում էին սարեակ-  
ների գալու վճռական բոպէին. ի՞նչ պիտի անի  
այն ժամանակ ծերունին, որ տէր էր դառել  
ուրիշի բնին:

—Սարեակն ինչ է—բարձրաձայն մաածում  
էր մեր ճնճղուկը—մի յիմար թուչուն, որ գիտէ  
միայն մի տեղից միւսը թուչել: Այ, մեր աքա-  
ղան էլ մի բան չէ, բայց գոնէ մի տեղ է նըս-  
տած, իսկ վերջն էլ արգանակ կըպատրաստեն  
նրանից... ուզում եմ ասել թէ յիմար աքաղա-  
ղը գոնէ կերակրի համար պէտքական է. իսկ  
սարեակը ինչի՞ է պէտք: Գալիս են ինչպէս  
խելագարներ, պտոյտպտոյտ անում, կչկչում...  
Թու, նայեն իսկ անախորժ է:

— Սարեակները երգում են, — նկատեց քոչչին, որին ձանձրացը ին ճնճղուկի շատախօսութիւնները — իսկ դու միայն գովանալ գիտես:

— Երգում են. և այդ երգ է կոչւում, — զարմացաւ ծեր ճնճղուկը: — Հա, հա, հա..., Աչ, ներողութիւն, պարոններ, թէպէտ լաւ չէ ինքն իրան գովելը, բայց պիտի ասեմ, որ եթէ կայ մէկը, որ լաւ է երգում, այդ միայն ես եմ... Ես շարունակ երգում եմ, ամբողջ կեանքս... այ, լսեցէք՝ ծիւ-ծիւ, հ՞ը, ինչպէս է: Ճշմարիտ չէմ..., ինձ բոլորն էլ ականջ են դնում...

— Բաւական է, ծեր մասիսարա:

Նոր բունը շատ յարմար բնակարան էր: Գլխաւորը, որ կտրից ամեն ինչ երեւում էր: Հէնց որ հաւերին կուտ էին բերում, ճնճղուկը նրանցից առաջ էր վաղ տալիս, ինքը կշանում և իր մարիկին էլ բաժին հանում: Նա յաջողեցնում էր քուչից էլ մի բան թոցնել մինչև վերջինս որջից դուրս էր զալիս: Ամեն տեղ էլ հասնում էր. հաւերի ոտքերի տակերն էր ողբառյոտ դալիս, ծիու ախոռը մտնում, շատ անգամ նոյն իսկ սենեակն էր մտնում — նրա շատակերութեան և յանդգնութեան չափ ու սահման չկար: Այդ դեռ ոչինչ. նա շրջում էր և հարեան հայեաթները ու հատիկներից իրան բաժին հանում: Ամեն տեղ մտնում էր, ամեն տեղ գործ գտնում և ոչ ոքի բանի տեղ չէր դնում:

Եկաւ մարտ ամիսը: Օրերը տաք էին և պարզ: Զիւնը ամեն տեղ սկացաւ, իջաւ, ջրով լցւեց և այնպէս վիսրուն դարձաւ, կարծես որդերի կերած լինէր: Ուռենու ճիւղերը կարմըրեցին և լցւեցին հիւթի առատութիւնից:

Փոքրիկ Սաքօն, առաւօտները հէնց որ աշքը բաց էր անում, իսկոյն մօտ էր վազում պատուհանին որ տեմսի սարեակներն եկել են թէ ոչ: Օրերը անցնում էին իրար ետևից, իսկ սարեակները չըկային ու չըկային:

— Սպի, բնի մէջ միշտ այն ճընճղուկն է նստած, գանգատում էր նա հօրը:

— Սպասիր, շուտով կըպատժէի: Երեկ սեագուաններ եկան, ուրեմն մեր սարեակներն էլ շուտ կըգան:

Իսկապէս որ, հարեան պարտէզը ծածկւած էր սև կէտերով, կարծես կենդանի ցանց լինէր: Դրանք գարնան առաջին հիւրերն էին, որոնք եկել էին հեռաւոր տաք հարաւից: Այնպիսի աղմուկ էին բարձրացըել, որ բաւական հեռուից լսելի էր — կատարեալ բազար էր:

— Է՛, կնիկ, այժմ պատրաստ կաց. — դեռ երեկոյեան շշնջում էր ծեր ճնճղուկը իր ընկերունուն: — Առաւօտը սարեակները կըգան... Ես նրանց ցոյց կըտամ. կըտեսնես: Ես ոչ ոքի ձեռք չեմ տալիս, թող ինձ էլ հանգիստ թողնեն: Նըրանք իրանց համար, մենք էլ մեղ համար:

Ամբողջ գիշեր ծեր ճնճղուկը չքննեց և արթուն հսկում էր: Մի առանձին բան չըպատճանեց: Առաւօտեան եկաւ պստիկ ժեռերի մի երամակ: Խելօք թոշուններ էին, նստեցին ուռենու վրայ, հանգստացան և շարունակեցին իրանց ճանապարհը: Նրանք շատապում էին ժայռերի ծերպերը: Նրանցից յետոյ եկան չորանխափուկները—առաջիններից աւելի համեստ: Ման էին գալիս չորանխափուկները փողոցներով, պոչները տըմբտմբացնում և ոչ ոքի չէին անհանգստացնում: Ծեր ճնճղուկը նոյն իսկ ուրախ էր նրանց տեսնելու: Պատահեցին և անցած տարւայ ծանօթներից:

— Հեռո՞ւ էիք գնացել, ախսլրտիք:

— Ո՞հ, շատ հեռու:

— Իսկ այստեղ ձմեռը շատ ցուրտ էր:

— Ա՛խ, շատ:

— Մնաս բարով, ճնճղուկ, ժամանակ չունիք:

Այսպէս ցուրտ էր. իսկ բնի մէջ այսպէս տաք, ընկերուհին էլ քաղցր քնած էր: Հէնց նոր էր ծեր ճնճղուկը տաքացել, դեռ աչքն էլ չէր փակել, որ սարեակների առաջին երամը շրջապատեց նրա բունը: Շրջապատեցին և այսպիսի աղմուկ բարձրացրին, որ ծեր ճնճղուկի դողն ընկաւ:

— Եյ, դնւ. դուրս կորի, կանչում էր սու-

րեակներից մէկը, պատուհանսից ներս նայելով:

— Դէ, դէ, շտապիր, ուաղ եղիր:

— Դու ովկ ես... ես այստեղի տէրն եմ: Հեռացիր այստեղից. ես կատակներ չեմ սիրում...

— Դու դեռ խօսնում ես, յանդուղն:

Թէ ինչ պատահեց յետոյ, պատմել իսկ զարհուրելի է: Կարգադրիչ սարեակը մտաւ բունը, իր երկար և բզի նման սուր կտուցով ճընճղուկուհուն վզակոթից բռնեց և դուրս ձգեց պատուհանից:

— Օգնեցէք, օգնեցէք, գոռում էր ծեր ճընճղուկը, կծկւելով անկիւնում և կատաղի դիմադրելով: Թալանում են... օգնեցէք. վայ, վայ, սպանեցին:

Իսչքան էլ դիմադրեց, ինչքան էլ կռւեց, բայց վերջ ի վերջոյ խայտառակութեամբ դուրս ձգւեց բնից:

### III

Զարհուրելի առաւօտ էր: Առաջին վայրկեանին ծեր ճընճղուկը չէր կարողանում հասկանալ թէ ինչպէս պատահեց դժբաղտութիւնը... Ո՞հ, սա տրաքւելու բան է: Բայց դրա հետ մի կերպ կարելի էր հաշտւել, նա բնակւել էր ուրիշի բնի մէջ, եկան տէրերը և հեռացրին այստեղից — և ուրիշ ոչինչ: Եթէ ճընճղուկն էլ սարեակի պէս

կտուցի վիխարէն բիղ ունենար, նա էլ կյաղթէր... Բանն այն է որ ամօթ է. այդ էլ վատ է երբ մարդ պարծենում է, բղաւում, չարախոսում.—Ա՛հ, ի՞նչ վատ է:

—Ի՞նչ վախացրիր սարեակներին. — կանչում էր աքաղաղը հայեաթից: — Ես թէպէտ մենակ արգանակի եմ պէտքական, բայց իմ բունը ունիմ, իսկ դու հիմա թռչկոտա մի ոտիդ վրա... Անիծեալ շատախօս: Հախտ է:

—Դու ինչ ես ուրախանում, — հայհոյում էր ծեր ճընճղուկը: — Սպասիր ես քեզ ցոյց կըտամ... Ես ինքս իմ կամքով թողեցի բունը, ինձ համար մեծ էր, արանքներից էլ փչում էր:

Ողորմելի ճընճղուհին նստել էր կտուրին խեղճացած և յուսահատ. նրա տեսքը աւելի զայրացրեց ծեր ճընճղուկին: Նա մօտ թռաւ նրան և սաստիկ կտցահարեց դիմին.

—Ի՞նչ ես յիմարի պէս նստել. ինձ էլ խայտառակում ես... զնանք նախկին բունը և պրծաւ գնաց: Իսկ սարեակների հետ ես հաշիւս կըտեսնեմ:

Բայց այնտեղ բնի մէջ տեղաւորւած ազգականները ոչ մի պայմանով չուզեցին զիջել: Բարձրացրին աղմուկ, աղաղակ և դուրս արին քեռուն. սա արդէն սարեակներից էլ խայտառակ բան էր: Հէնց իր ազգականները դուրս են անում իրան. ինքը չէր որ աշխատում էր նրանց

համար: Արի ու սրանից յետոյ մէկին լաւութիւն արա: Առանց պատճառի վիրաւորեց ընկերունուն, կորցրեց բունը և ինքն էլ ընտանիքով դատարկ մնաց կտուրի վրա նստած: Մէկ էլ տեսար եկաւ բաղէն և պատառ-պատառ արաւ: Ծեր ճընճղուկի սիրաը կոտրւեց, նստեց կտրի ծայրին մի քիչ ուշի գալու և խորը ախ քաշեց: Է՛հ, շատ դժւար է լուրջ թռչունի համար ապրել էս աշխարհիս երեսին:

—Ի՞նչ պէտք է անենք, — ողբաձայն կըկնում էր ճընճղուհին: Ամենքը բուն ունեն... Շուտով ձագեր կունենան. իսկ մենք ինչպէս տեսնում եմ կըմնանք կտրի վրա նստած:

—Սպասիր, այ կնիկ. կըտեղաւորւենք:  
Իսկ ամենամեծ խայտառակութիւնը դեռ յետոյ էր գալու: Փոքրիկ Սաքօն դուրս վազեց սենեակից և ուրախութիւնից ծափ տեց, որ սարեակները եկել են. նա չէր կշատանում սարեակներին նայելուց: Հայրն էլ զւարճանում էր և ասում:

—Տես ինչ գեղեցիկ են, կարծես մետաքսից լինեն շինած: Իսկ ինչպէս են երգում... Ուրախ թռչուններ են:

— Որտեղ է ծեր ճընճղուկը, ապի. այն որ ապրում էր սարեակների բնում: Տես, տես, նըստել է կտրի վրա... Ի՞նչ ծիծանարժ է, պիտուրները ցցել է,

—Այս, նա միշտ էլ այդպէս անշնորհք է:  
ի՞նչ է. չես հաւանում. —դարձաւ հայրը ճընճ-  
դուկին: Մի խցկւի այնտեղ ուր քեզ չեն հրա-  
փում. քեզ համար չէինք շինել բունը:

Մինչև անգամ հաւերն էլ էին ծաղրում  
դժբաղդ ճընճուկին: Տեսէք թէ ի՞նչ տեղը հա-  
սաւ... Խեղճը նոյն իսկ լաց եղաւ վշտից. բայց  
յետոյ խելքը գլուխը հաւաքեց և խրախուսւեց:

—Ի՞նչ էք ծիծաղում—հարցրեց հպարտ  
ծերուկը նրանց: —Հա, ի՞նչ է, ճշմարիտ է սխալ-  
մունք գործեցի, բայց էլի ճեղանից խելօք եմ...  
Իսկ ամենից զվարորդ՝ ես ազատ թռչուն եմ:  
Ապրում եմ Աստծու տւածով, իսկ մարդկանցից  
ոչինչ չեմ մուրում: Ի՞նչ կըլինէք դուք, բոլորդ,  
եթէ քեռին ձեզ չըկերակրի և խմացնի: Եյ, քու-  
չի, կըսատկէիր սովից, գու էլ, յիմար աքաղաղ.  
Ճին էլ, կովս էլ: Իսկ ես միշտ իմ գլուխս կը-  
պահեմ: Եդ է է.. Այ ես ինչպիսին եմ... Հիմա  
էլ բանս կըգրատեմ, մի քիչ ժամանակ տւէք...  
Այն հատիկները, որ ես երբեմն հաւաքում եմ  
ձեր հայեաթում, էն էլ իմ աշխատածն է: Ո՞վէ  
մժզուկ բռնում, թրթուռ գըտնում, ամեն տե-  
սակ ճիճու որսում: Բոլորը ես... ես:

—Գիտենք ինչպէս ես գտնում որդերը—  
նկատեց աքաղաղը, աչքով անելով սարեակնե-  
րին: —Բանջարանոցում կըցանեն սիսեռ ու բակ-  
լա: Մէկ էլ տեսար հաւաքւեցին ճընճուկները,

բոլորը փչացրին, իսկ սիսեռն ու բակլան կե-  
րտն: Գողութեամբ ես ապրում, ճընճուկ, խոս-  
տավանիր:

—Գողութեամբ: Ե՞ս.—զայրացաւ ծեր ճընճ-  
դուկը: Ես մարդու առաջին բարեկամն եմ... մենք  
միշտ միասին ենք լինում, ինչպէս վայել է բա-  
րեկամներին. որտեղ նա է—այնտեղ եմ և ես:  
Ես բոլորովին անշահասէը բարեկամ եմ... մեր  
քեռին երբեցէ մի բունց վարսակ տւել է ինձ:  
Չի էլ հարկաւոր... ի հարկէ վիրաւորականն է  
երբ նորեկներին ամեն տեսակ պատիւ են ցոյց  
տալիս: Նոյն իսկ անիրաւութիւնն է: Իսկ դուք  
այդքան էլ չէք հասկանում. որովհետեւ մէկդ  
միշտ լծի տակ է, միւսդ շղթայւած, երբորդդ հա-  
ւատանն է նստած... Իսկ ես ազատ թռչուն եմ  
և այստեղ ապրում եմ իմ բարի կամքով:

Երկար խօսեց ծեր ճընճուկը, վրդովւած  
իր բարեկամ-մարդու խարդախութիւնից: Մէկ  
էլ անսակնկալ կերպով անյայտացաւ... Չըկայ ծեր  
ճընճուկը մէկ, երկու օր, չըկայ ու չըկայ:

—Երկի վշտից սատկել է,—վճռեց աքա-  
ղաղը: —Եթէ լաւ մտածենք, թռչուններից ամեն-  
նաանմիան է:

Անցաւ ամբողջ մի շաբաթ: Մի առաւօտ նա  
կըկին երկաց կտուրին, ուրախ և ինքնագոր:

—Ես եմ, ախալքափ, —ճընճուկը նա հպար-  
տութեամբ: —Ի՞նչպէս էք.



2376 Դ

— Դու դեռ կենդանի՞ ես, ծերուկ։  
— Փառք Աստծու... Նոր բուն ունեմ։ Լաւ  
բան է... այս անդամ արդէն քեռին ինձ համար  
է շինել։

— Ով գիտէ. էլի խաբում ես:

— Հը, ուզում էք ասեմ ձեզ։ Ոչ, սիրելի ներս, այժմ էլ ինձ չէք կարող խսքել… Մնացէք բարով։

Ծեր ճընճղուկը տուտ չէր ասում: Նա իսկապէս որ նոր բուն էր գտել: Բանջարանոցում, մարդագի մօտ կանգնած էր մի հին խրտւիլակ. փայտի վրա ինչ որ ցնցողիներ էին ծածանւում, իսկ վերեկից անցրած էր մի մեծ հին զլիարկ, Այստեղ էր, որ մեր ճընճղուկը շինել էր իր բունը, այստեղ նրան ոչ ոք ձեռք չի տայ, որովհետեւ ով կենթադրի թէ այստեղ բուն կայ և խրտւիլակից էլ կըվախենան: Սակայն բանը շատ տխուր վերջ ունեցաւ: Ճընճղուհին զըտակի մէջ ճուտեր հանեց. մի անգամ քամին փչեց և զլիարկը քշեց հեռու, բնի հետ միասին: Ծեր ճընճղուկը տանը չէր և երբ վերադարձաւ՝ դտաւ միայն սատկած ճուտերին և նրանց ողբացող մօրը. մայրն էլ ճուտերի մահից յետոյ երկար չապրեց. չէր ուտում, հետզետէ նւազում էր, անշարժ նստած մի ճիւղի վրա: Այդպէս էլ մեռաւ վշտից .. Ախ, ի՞նչպէս կոկծաց ծեր ճընճղուկը, ինչքան ողբաց և լացեց:

Եկաւ աշունը. բոլոր չւող թոչունները  
գնացին դէպի տաք հարաւը: Ծեր ճընճղուկը  
միայնակ նորից ապրում էր սարեակների ա-  
մայի բնի մէջ: Նա իրան շատ վատ էր զգում  
և համարեա թէ էլ չէր ճռուղում: Երբ եկաւ  
առաջին ձիւնը և փոքրիկ Սաքօն սահնակը ձեռ-  
քին դուրս վազեց հայեաթը, նրա առաջին հա-  
յեացքը ընկաւ ծեր ճընճղուկի անշնչացած փոք-  
րիկ գիւակի վրայ: Ողորմելին սառել էր:

— Ավասու, — փնթփնթում էր աքաղաղը խորիմաստ կերպով - կարծես մէկը պակաս լինի... միշտ ճըռողում էր, ամեն տեղ պտտում, ամենքի հետ խօսում: Հայեաթը տիսուր է առանց ծեր ճընճղուկի:

ւայս զմենդրու ունչ ճանձին խաղաղութեան  
կայ վեցամյա և առաջանակ առ զա բժակ Ա ոյ ծայ  
դմայա և և առաջանակ զա վեցամյա ոյ սպազմ  
զոյս Ա և առաջանակ թ զա Այս շա բայ այս  
խաղաղութեան Ճ ճանձին յանձնու մի բայտու թ

Առարձնութեական պէտք առ զի՞մ Առաջի զի  
կի Տաճար շահաւ այլընդունակութիւնը չը Ա  
-րով ըստու միջի առ ոչ բայտ Եղացարսեան  
արժան զորոց զի՞ն այդ Առաջինի այլ պահան

## ՃԻՇՈՒ

### I

Մեր գաւառական քաղաքում խենթ եաշին  
միշտ ձիճու էին կանչում։ Միջահասակ մի  
ծերուկ էր նա, կարճ միրուքով և շարունակ  
ժպտացող մուգ աչքերով։ Ամառ-ձմեռ նա շըր-  
ջում էր պատուած վերարկուով և մորթէ գդա-  
կով։ Եաշէն անբաժան ձեռքին բռնած ունէր մի  
երկար փայտ, որը անդադար շարժում էր օդի  
մէջ, կարծես աներեսոյթ թշնամիներից պաշտ-  
պանւելիս լինէր։ Երբ նա մէկին պատահում էր,  
սիրալիր կերպով ասում էր՝ «բարե... Ուր ես  
գնում»։

Առհասարակ ձիճուն շատ ողորմելի արա-  
րած էր։ Ուրտեղ էր նա բնակւում, ի՞նչով, կամ  
ի՞նչպէս էր գոյութիւնը պահպանում—յայտնի  
չէր. այդ ոչ ոքի չէր էլ հետաքրքրում։ Բոլորն  
էլ սովորել էին տեսնել ձիճուին, և տարօրինակ  
էր թւում երբ նա չէր երեսում փողոցներում։

Մեզ, աշակերտներիս համար, ձիճուն մի  
ծիծաղաշարժ մարդ էր, որի գլխին առանց խըդ-  
ահարւելու թափւում էին մեր բոլոր մանկա-

կան չարութիւնները։ Ամենից շատ մեզ դուք  
էր գալիս նրան համբերութիւնից հանելը։ Ժըպ-  
տերես և բարի ծերուկը զայրանում էր և փայտ-  
ով ձեռքին ընկնում մեր ետևից։ Նրան զայ-  
րացնելը շատ հեշտ էր, Պատահում էր ձիճուն և  
բարեսիրտ կերպով ասում։

—Բարե... ուր ես գնում։

—Աղ բերելու...

Այդքանը բաւական էր և ձիճուն ընկնում  
էր վիրաւորողի ետևից։ Ի հարկէ մեր տղայական  
ուները աւելի արագ էին փախչում քան ծե-  
րուկինը և ձիճուն մի որեէ անկիւնում կանգ-  
նած երկար ժամանակ հայհոյում էր։ Այս չար  
խաղը հետևեալ ծագումն ունէր։ Մի օր երբ ձի-  
ճուն դեռ երիտասարդ էր, եկել էր շուկայ աղ  
գնելու։ Խանութպահնները ուղեցել էին հանգա-  
մանքից օգտւելով կատակ անել նրա հետ։ Երբ  
նա աղը ձեռքին տուն էր գնում, մէկը կանգ-  
նեցրեց նրան։

—Ձիճու, ի՞նչ ես գնել։

—Աղ...

—Ախր քեզ խաբել են, և որդունքով լի աղ  
են աւել։

Այդքանը բաւական էր, որ ձիճուն յետ վա-  
զեր աղը ծախող վաճառականի մօտ, հայհոյէր  
նրան, իսկ աղն էլ երեսին շպրտէր։ Յիմար վա-  
ճառականներին շատ ծիծաղաշարժ թուաց այդ

և սկսեցին հալածել ձիճուխն որդնոստ աղով. իսկ  
յետոյ այդ չար խաղը շարունակեցին դպրոցա-  
կան տղաներու:

Իսկ ձիճու մականունը տւել էին ծերունի  
եաշին այն բանի համար, որ նա բոլոր միջատ-  
ներին ասում էր ճիճու, իսկ բոլոր թուչուննե-  
րին—ագռաւ։ Սենեալի ճանձը—ճիճու էր, մե-  
ղուն, թիթեռը, մոծակը նոյնպէս ճիճու էին և  
այն։ Այս բանն էլ էր ամենքին զւարճութիւն  
պատճառում և անթիւ անգամ հարցնում էին՝

—Իսկ որդը նոյնպէս ճիճու է:

—**Дімитрі**:

$-0^\circ \delta p \dots$

—Quæuntum...

Ճիճուն ամբողջ իր կեանքը անցըել էր քաղաքում և ոչ մի անգամ քաղաքից դուրս չէր գնացել: Այդ պատճառով գաղափար անգամ չունէր օձի մասին: Այդ էլ ամենքին ծիծաղելի էր թւում:

Իսկ ամենից զւարձալին նրան պաշտօնի մասին խօսեցնելն էր: Ծեր Յագօն ամբողջ կեանքում պաշտօն էր որսնում և, ի հարկէ, չէր գտնում: Նա ամենքին առաջարկում էր իր պատրաստակամութիւնը:

— Ի՞նչ տեսակ պաշտօն ես ուզում, Ճիճու։

—Հը այնպիսի էլի... ամեն կերպ կաշխատուի:

Իսկ ի՞նչքան սոճիկ կուգենաս ստանալ:  
Ամիսը չորս շաբաթ, իսկ հինգերորդը  
քնիլ:

— Ամւ վարձատրութիւն է... իսկ տօներին  
պարզե էլ կուզենամս ստանալ:

—ի՞նչ ասել կուգէ. ի հարկէ... մի ֆունտ  
ծուխ ամեն տօնին, ինչպէս ստանում են բո-  
լոր պաշտօնեաները:

ի հարկէ, այս բոլոր ծաղրաբանութիւնները ձիմուն չէր կարող իր խելքով հնարած լինել, այլ միայն կըկնում էր ուրիշների ասածները:

Մասյլ աշուն էր, անընդհատ անձրեներով, սառը քամիով, վաղահաս ցրտերով և այն անախորժ ձիւնով, որ մի օրից արդէն հալուում և ցեխսէ դառնում։ Զմեռ էր, սառը բուք, ձիւն և այնպիսի ցուրտ, երբ թռչունը թռչելու ժամանակ սառչում է։ Վաղահաս գարուն էր, խարուսիկ տաքութեամբ և գարնանային բազմաթիւ հիւանդութիւններով, ցրտահարութիւններով. տարւայ այդ երեք եղանակներին շատերն են մահացել, այնպիսի մարդկիկ, որոնք բնակւում էին տաք տներում, քնում էին փափուկ անկողիններում, հագնում տաք շորեր, ուտում և

խմում ուղածի չափ։ Այս, նրանք մեռնում էին, այդ երջանիկ մարդիկը, իսկ ձիճուն աղբում էր և շրջում ցըտին իր պատուած վերաբկուգ։ Ո՞րտեղ էր աղբում, ի՞նչով էր կերակրում, ինչպէս հազնուում—միայն Աստծուն է յայտնի։ Այդ դեռ ոչինչ. ամեն եղանակին և ցրախն ձիճուն մասնակցում էր բոլոր թաղումներին, հարստի թէ աղքատի, և ննջեցեալներին ուղեկցում մինչև գերեզմանատուն։ ձիճուն միշտ զնում էր հանդիսականների առաջից, գընում էր առանց զիսարկի, ձեռնափայտը շարժելով։

Եկաւ բուն գարունը. արեստ, տաք ջրերով, կամաչ խոտերով, գարնան առաջին ծաղկիներով։ Մեր գասարանը աւելի փոքր, մութ և փոշու էր թւում։ Գտնւեցին նոյն իսկ այնպիսի խելօք տղաներ, որոնք նախանձում էին խենթ ձիճուի վայելած կատարեալ ազատութեան։

Մի անգամ, երբ գասերից յետոյ աշակերտներս խմբովին դուրս թափւեցինք փողոց, ձիճուն հանդիպեց մեզ դպրոցի սրահի մօտ։  
— Բարեւ... բարեսրառութեամբ բարեւց նամեզ ամենքիս։

— Ա՛, ձիճու, բարով։

Մեր սովորութեան համեմատ շրջապատեցինք նրան և սկսեցինք ամեն կողմից հարցեր տեղալ։

— Ի՞նչպէս ես, ձիճու։

— Ոչինչ, վրառք Աստծու... Պաշտօն եմ գըտել։

— Ի՞նչ պաշտօն։

— Աստիճանաւոր եմ... Հա... ամեն ամսին ուռիկ, տօներին էլ պարգև...։

— Ի՞նչ պէտք է անես։

— Լաւ պաշտօն է... ես ժամագործի խանոթ եմ բաց արել։

Ի հարկէ մենք մի կուշտ ծիծաղեցինք, և մեզ հետ միասին ուրախ-ուրախ հրհուում էր նաև ձեր ձիճուն։

— Ի՞նչ տեսակ ժամացոյցներ ունիս, այ ձիճու։

— Այ, տեսէք։

ձիճուն կոնատակից հանեց մի փայտէ տուփ և հպարտութեամբ ցոյց աւեց մեզ։

— Դա ժամացոյց չէ, ձիճու։

— Ոչ, ժամացոյց է... գիշեր և ցերեկ բանում է։

Զգուշութեամբ բաց արեց տուփի խուփը և մենք տեսանք նրա տակին այս և այն կողմը վազվազ մի փոքրիկ բղեղ։ Այս արդէն աւելի քսն դւարձալի էր։

— Ձիճու, ժամիկը ժամացոյցդ։

— Գնիր...։

— Որքան արժէ։

—Հարիւր բութի:  
Մի չարաձնի խմեց ծերունու ձեռքին և  
նրա ժամացոյցը դուրսեց գետին։ Մենք թափ-  
ւեցինք այս ու այն կողմը, իսկ ձիճուն բարձ-  
րացըեց իր ժամացոյցը, նայեց ահզն է արդեօք  
բղէզը և հանդարտեց։

— Բարով. — ասաւ Կա — զնում եմ ծառայութեան:

Նա բարեում և մնաս բարի էր ասում միշտ  
միկնոյն մէկ բարով—«Բարով»:

—Վերցըու մէկ կոպէկ ժամացոյցիդ համար. —առաջարկեած մէկը:

Բայց ճիճուն էլ ոչ մի ուշը չէր գարձնում  
մեզ վրա :

Անցաւ երկու շաբաթ։ Ճիճուն ժամացոյցը  
ձեռքին շրջում էր քաղաքի փողոցներով և ահ-  
սահման երջանիկ էր զգում իրան։

Մի առաւօտ, երբ մենք հաւաքւում էինք  
դպրոցը, դուան մօտ, փայտէ նստարանի վրայ,  
որտեղ սովորաբար հերթապահութիւն էր անում  
գիշերապահը, նստած էր մեր ձիճուն և դառնա-  
դին լայիս էր:

— Ճիճու, ի՞նչ է եղել:

Նա կամաց հեծկլտում էր, ինչպէս հեծկլտում են փոքրիկ երեխաները, և առանց ոչինչ ասելու ցոյց տւեց ժամացոյցը։ Փայտէ առւփի յատակին ընկած էր սատկած բգէզր...այս օրեւայ պէս

յիշում եմ վշտահար ծերունուն և նրա լացակումած դէմքը, որի վրայից կաթկթում էին ծերութեան արաւասուբները:

Ո՞վ չէ տեսել, թէ ինչպէս են մարդիկ լաց  
լինում: Բայց այսաեղ, մեր առաջ լալիս էր  
դժբաղդ, իսենթ Ճիճուն, այն Ճիճուն, որին մենք  
սովոր էինք ծաղրել ու անարգել:

Ամենքս էլ յանկարծ խղճահարւեցանք։ ԶԵ  
որ լաց էր լինում ոչ թէ խենթը, այլ կենդանի  
մարդը. այն, այն մարդը, որին մենք մինչ այդ  
վայրկեան չէինք նկատում մեր մանկական թե-  
թեամտութեան պատճառով։ Բոլորս էլ թէ խրդ-  
առում էինք ծերուկին և թէ ամաչում արած-  
ներից։

Դժբախտաբար շուտով համոզւեցի, որ իսկապէս յիմար եմ:

Սաքօն և Գիքօն շատ պղտիկ էին: Նրանք էլ սիրում էին ինձ, բայց նրանց փաղաքշանքը միշտ էլ կոպիտ կերպով էր արտայայտում: Օրինակ, եթէ ձեզ բռնեն գլխից և սենեակից սենեակ քաշքշեն, բաւական անախորժ գրութիւն է չէ: Ես ամբողջ ոյժովս գիմադրում էի. հետոյից այս տեսարանը շատ ծիծաղաշարժ էր և մանուկներին շատ էր գւարճացնում:

— Ի՞նչ ծիծաղելի է, ասում էին Սաքօն ու Գիքօն՝ իսկ եթէ պոչից բռնենք և մեր շուրջը պտոյտ տանք:

Կամ ի՞նչպէս էք հաւանում այս տեսարանը. Սաքօն բռնում է ականջից և քաշելով ման է ածում բոլոր սենեակները, մինչև որ մեծերից մէկնումէկը վերջ էր գնում այս անողորմ զբաղմունքին:

Սաթիկն և նունիկը աւելի գթասիրտ էին և շատ անգամ պաշտպանում էին ինձ. սակայն նրանք էլ էին երբեմն չարչարում: Մանաւանդ նունիկը սիրում էր խաղալ ինձ հետ և նրա փաղաքշանքները շատ անգամ անհանգստացնում էին ինձ: Օրինակ, նոր էի ճաշը վերջացրել, մի անկիւն քաշւած ուղում էի փոքր ինչ հանգրատանալ. յանկարծ նունիկը գրկում է մէջքից և խելագարի նման վազվում սենեակում: Եթէ

## ՊԱՌԱՌ ՄՈՒՏԱՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՔԸ

Բնականից ես մի բարի կատու եմ և եթէ պատահում է երբեմն, որ մէկին չանգուստ եմ, հաւատացնում եմ որ ուրիշներն են պատճառ լինում: Երևակայեցէք որ ձեզ քաշում են պոչեց, կամ քիթը խուտուտացնում, վզից բռնսծ քաշքում և այլն: Ճշմարիտ սա շատ անախորժ բան է:

Ես սկզբում խեղճ-խեղճ մլաւում եմ, իսկ եթէ այդ չի օգնում, այն ժամանակ արդէն չանգուստ եմ:

Ո՞հ, այդ սիրունիկ երեխաները ում ասես համբերութիւնից չեն հանի:

Երբ ես դեռ յիմար փոքրիկ էի, մարդկանց շատ էի հաւատում: Կանչում էին թէ չէ, իսկոյն մօտենում էի, բարձրանում ծնկներին և աշքերը փակելով քնքշութեամբ մլաւում: Ամենից շատ փաղաքշում էր ինձ դայեակը. նա վառարանի մօտ փափուկ տեղ էր շինել ինձ համար: Երբեմն զրկում էր, փաղաքշում և ասում.

— Ի՞նչ փոքրիկ ես, յիմար... բոլորովին յիմար...



չանգոռում եմ, քաշում է ականջիցս և ասում.

— Ա՞խ, ինչ չար կատու է... ինչ անտառնելի...

Բայց ես չեի բարկանում նրա վրայ. Նունիկը բարի աղջիկ էր և մենք շատ անդամ թուղթ էինք խաղում: Նա թուղթը կապում էր երկար թելի ծայրից, իսկ ես վազում էի նրա ետևից: Չեք կարող երևակայել թէ ինչպէս թուղթը նման է մկան...

— Օ՛, ինչ ծիծառելի է — բզաւում էր նունիկը, թելը բանած վազվակելով սենեակներում:

Այս խաղն էլ վատ վերջ ունեցաւ, այսինքն լաւ վերջ չունեցաւ միայն ինձ համար: Սաթիկին շատ դուր եկաւ իմ այդպէս խաղալը և ուզեց մի նոր խաղ հնարել:

— Սիրելի մոռան կատակիս, արի ինձ մօտասաց Սաթիկը սիրալիր ձայնով:

Ես սիրում եմ երբ ինձ փաղաքում են և վատահութեամբ զնացի նրա մօտ: Սաթիկը մի ձեռքով շոյում էր մէջքս, իսկ միւսով զարմանալի ճարապիկութեամբ թղթի կտորը կապեց պոչիցս: Մանկական միամտութեամբ ես բան չը հասկացայ, միայն մի տեղից թղթի խշոցի ձայն էի լսում: Այդքանը բաւական էր, որ նեաի պէս ցած թոշէի Սաթիկի գրկից, Երևակայեցէք զարմանքս և սարսափս, երբ թուղթն էլ վազեց իմ ե-

ուկից... ես նրանից էի փափչում, նա ինձ էր ալածում...

Սաթիկն ու նունիկը հոհոռում էին, մինչւեռ ես յատակի վրայ թաւալ-թաւալ էի անում, ոզուր աշխատելով բոնել անիծեալ թուղթը, որ ամառութեամբ հալածում էր ինձ: Գլուխս պղոյշ եկաւ, աչքերս արիւնով լցւեցին և բանը լերջացաւ նրանով, որ անզգայ գլորւեցի յատափ վրա: Ասացէք ինչդրեմ, ինչ ծիծառելի բան այ այստեղ:

Օ՛, ես այն ժամանակ փոքր էի և յիմար ոյժմ ամեն բան լաւ եմ հասկանում... էլ չեն լարող թղթով ինձ խարել:

Միայն մի բանի հետ չեմ կարողանում ոչ որ կերպ հաշտւել: Պառկում եմ ինձ համար, փրհում, բայց հէնց որ մի չարաճճի սեղանի տակ կամացուկ չանգոռում է, ես կայծակի արառութեամբ վեր եմ թոշում և վազում բռնելու սյն մուկը, որ իսկի գոյութիւն էլ չունի:

վա հայ ուն կառավարե մէ պիտույք ուն  
շաբաթ ուն կառավարե ցըստու ու պիտույք  
կառավարե լուսուն ցըստու ու պիտույք

զանում կ առ պահի պատճեն պահ ու ուղարկութեան համար կ առ պահի պատճեն պահ ու ուղարկութեան համար

իրացնել խեթի բոց  
Հ Կոմարովս եղ ուժ զնոց մի պատմ  
որևէ հայ և Կոմար ըրացու բարձ  
զնոցի վճարու մի ու ուժ զնոց և ուժ  
զնոց վիճակի ու Հ Կոմարու քարոզու յո  
ուժու նորու և Խոշով և ուժ զնոցի  
ուժու թ օպերատոր զնոց ու գործու



«Հ Ա Ս Կ Ե Բ Ի» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկագեան, Քոան օր գետնի ուսկ 20 կ
2. Օսկար Ռուայլը, Պրինցն ու ծիծհոնակը . . . . . 20 կ
3. Ստ. Լիսիցեան, Քաջ ձամբարդներ . . . . . 25
4. Աթ. Խնկոյեան, Գիւղացին ու արջը . . . . . 25
5. Ստ. Լիսիցեան, Քաջ զինւորներ, պիկո . . . . . 8
6. Ռ. Պատկանեան, Զախու . . . . . 20
7. Ստ. Լիսիցեան, Առված զայլը . . . . . 10
8. Կառագիա Լուկաշեիչ, Քեսի Մկօ . . . . . 20
9. Կարլ Էվալդ, Երկիրն ու գիտասովը . . . . . 12
10. Կապուան, Ֆիօրէ ֆիրին, Ասկղ. . . . . 12
11. Խւանովիչ, Առօնց Ստեփանը. . . . . 20
12. Կ. Լուկաշեիչ, Ծաղիկների մէջ. . . . . 12
13. Աթ. Խնկոյեան, Աղեկոն ու արջը . . . . . 20
14. Նիկ. Սարգսեան, Կենդանիների գոյները . . . . . 15
15. Բրետ Հարտ, Մլիս. . . . . 12
16. Է. Սիտոն-Տօմպոսն Կախականջիկը. . . . . 12
17. Գ. Շևար. Արագոնաւորդները. . . . . 25
18. Աթ. Խնկոյեան, Պապն ու շաղկամը . . . . . 12
19. Կար. Միքիանեան, Մայրը . . . . . 12
20. Յովէ Թուման, Քէֆ անողին քէֆ չի պակսիւ. 20
21. Պուշկին, Քսած գժխուճին . . . . . 20
22. Ն. Սարգսեան, Թէ ինչու համար է ծաղիկը . 20
23. Նոյն. Թէ ինչպէս են տարածում սերմերը . 20
24. Կարլ Էւալդ, Տամներկու բոյր . . . . . 10
25. Ֆէրրօ. Տօնի համար . . . . . 10
26. Աթ. Խնկոյեան, Փեսացու մակը . . . . .
27. Աթ. Խնկոյեան, Աղեկոն ու կառնկը. . . . . 10
28. Մամին-Միքիրեակ. Ծեր ճնճուկը, ճիճու, պառաւ Մուանի Խոստվանքը, թարզմ. օր. Ն. Աղանեան. . . . . 12

ԲՓ

Գիւն է 12 կմՊ.